

ԶՐԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Ի՞նչ է զրպարտութիւնը: Ռուս նշանաւոր իրաւաբան Կօնին ասում է. զրպարտութիւնը նման է օձերի մի կապոցի, չար ձեռքով հրապարակ ձգուած: Կապոցն իսկոյն բացւում է, օձերը ցրւում են չորս կողմ, մտնում մէկի գրպանը, միւսի ծոցը, մի ուրիշի բերանը, բիթը և այլն: Նրանք տարածւում են ամենուրեք և չկայ մարդկային հնար նրանց ժողովելու և ոչնչացնելու:

Զրպարտութեան դէմ անզօր է ամեն մի կռիւ, ե՛ւ մարդիկ, ե՛ւ օրէնքները, ե՛ւ ոյժը, ե՛ւ համբերութիւնը, ե՛ւ հարուստը, ե՛ւ անմեղութիւնը: Օրէնքներ կան հիմնուած զրպարտութիւնը պատժելու համար, բայց հարիւրից իննսուն դէպքում զրպարտիչը ազատւում է պատժից, որովհետեւ նրա առջև հաղարաւոր դռներ կան պատասխանատուութիւնից փախչելու: Զրպարտչի զէնքը ամենազօր է, որովհետեւ նա ոչ խիղճունի, ոչ Աստուած, ոչ ամօթ: Որպէս խաւարի հարազատ զաւակ նա գիտէ խաւարի պէս թագնուել անտեսանելի խորշերում:

Զրպարտիչները զանազան տեսակ են լինում: Կան մարդիկ, որոնց բնութեան մէջ արմատացած է չարախօսելու ստոր ձիրքը և նրանք չեն կարող առանց այն հանգիստ ապրել մի օր անգամ: Սյդպիսիների համար անարատ կանանց վրայ արատ գցելը, արդարին գող հռչակելը, չքմեղին զրկող և հարստահարող անուանել հաւասար է ամառուայ հրատապ օրը մի բաժակ սառը ջուր խմելուն: Նրանք մի առանձին հաճոյքով են հնա-

րում նոյն իսկ իրանց մերձաւորների և բարեկամների մասին չեղած բաներ: Այն պահին, երբ նրանք հնարում են զրպարտութիւնը, զգում են մի տեսակ հոգեկան հաճոյք, ճիշտ այնպէս, ինչպէս արիւնհարբու մարդ-դադանը հաճոյք է զգում մէկի կոկորդը կտրելիս կամ փորը պատռելիս: Գիտութիւնը շատ մարդկային բարոյական ախտեր բացատրում է իբրեւ հիւանդութիւն, ցաւ: Օրինակ, կայ գողութեան հիւանդութիւն, որ կոչւում է կլեպտոմանիա, մարդ կարիք չունի գողանալու, բայց գողանում է, որովհետեւ բնութիւնը ստիպում է նրան: Բնական զրպարտիչը նոյնպէս հիւանդ է: Բընութիւնը նրան այդպէս է ստեղծել: Այդպիսին արժանի է կարեկցութեան, այդպիսիների դէմ բարկանալ չի կարելի:

Բայց կան զրպարտիչներ, որոնք չարախօսում են սրան նրան նիւթական կամ բարոյական շահից դրդուած, նիւթական, երբ դիտեն, որ մէկին զրպարտելով, կարող են իրանց օրուայ հացը հայթայթել, բարոյական, երբ գիտեն, որ կարող են իրանց սեպհական կասկածելի բարոյականութիւնը կասկածներից ազատել ուրիշների աչքում: Այդպիսիները սովորաբար ուրիշներին զրպարտում են հէնց այն աղտերի մէջ, որ իրանց հոգու սեպհականութիւնն է: Փորձուած է, որ ստախօսութեան դէմ ամենից շատ ստախօսն է բողբոլում, գողութեան դէմ գողը: Ինչպէս կան տգեղ կանայք, որոնք ոչ մի դեղեցկութիւն չեն հաւանում, նոյնպէս եւ կան բարոյական հրէշներ, որոնք իրանց հրէշութիւնը քողարկելու համար ուրիշներին են ուղում հրէշ ներկայացնել: Ահա այս տեսակի զրպարտիչները արժանի են հալածանքի և զգուանքի: Բարոյական հասարակութիւնը պարտաւոր է այդպիսիներին վռնդել իւր շրջանից, չը խաբուելով նրանց արտաքին փայլից: Եւ այն հասարակութիւնը, որ այդպիսիներից մի քանի անգամ խաբուելով, դարձեալ շարունակում է խաբուել, հարստահարուել, կողոպտուել, արժանի չէ կուլտուրական անունը վայելելու: * *